

Գործունեության կիսամյակային հաշվետվություն

2011թ.

ՀՈՒԼԻՍ –ԴԵԿՏԵՄԲԵՐ

Արարատի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2011 թվականի փետրվարի 21-ից: Արարատի Օրհուս կենտրոնի գործունեությունն ուղղված է նպաստելու Արարատի տարածաշրջանի շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությանը, հասարակության շրջանում այդ հարցերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը և վերջիններիս ձայները համապատասխան մարմիններին լսելի դարձնելուն՝ հանդիսանալով էկոլոգիական հիմնախնդիրների քննարկման հարթակ:


Նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ կենտրոնի նորընտիր փորձագետների խորհրդի առաջին նիստը: Խորհրդի կազմում ընդգրկվել են հավասար քանակի ներկայացուցիչներ պետական և ոչ պետական կառույցներից՝ քաղաքապետարանից, ՀՀ ԱՆ ՊՀ Առողջապահության նախարարության Պետական Հիգիենիկ Հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային կենտրոնից, հասարակական կազմակերպություններից, բիզնես սեկտորից, ինչպես նաև էկոլոգներ (Ընդհանուր թվով 10 անդամ):

2011 թվականի երկրորդ կիսամյակում Արարատի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ՝ կենտրոնում և կենտրոնից դուրս կազմակերպվել են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հետևյալ միջոցառումները.

Հ/հ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԻՊԸ	ՔԱՆԱԿԸ	ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ
1	Տեղեկատվության հասանելիություն /կլոր սեղան-սեմինարներ/	1	17
2	/հանրային քննարկումներ, կլոր սեղան-քննարկումներ/		
3	Էկոկրթությանը նպաստող միջոցառումներ	1	50
4	Միջազգային օրերի նշում	7	160
5	Փորձագետների խորհրդի նիստ	1	8
6	Հասարակական լսում	1	69
7	Շաբաթօրյակ, ծառատունկ		
8	Մամլո ասուլիս /հարցազրույց/	1	4
9	Ընդամենը		308

Միջոցառումների մասնակիցները հիմնականում եղել են ուսանողներ և աշակերտներ, ՏԻՄ-ի, բիզնես սեկտորի, ԳԱՄԿ-ի, բժշկական կենտրոնի, մարզպետարանի, ՋԼՄ-ների, հասարակության, ՀԿ-ների ներկայացուցիչներ, կամավորներ:

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացվում է նրանց ընդգրկվածությունը վերոնշյալ միջոցառումներին.



Արարատի Օրհուս կենտրոնում, կենտրոնի գործունեության 4 ամիսների ընթացքում տեղի են ունեցել 12 միջոցառում, որոնցից 7-ը սեփական նախաձեռնությամբ, 5-ը՝ համատեղ այլ կազմակերպությունների հետ, 9-ը՝ տարածքի տրամադրում: Միջոցառումներն անց են կացվել ոչ միայն Օրհուս կենտրոնում այլև դպրոցներում, քոլեջներում, Արվեստի դպրոցում, բժշկական կենտրոնում և այլ կազմակերպություններում, համայնքներում: Կենտրոնի նախաձեռնությամբ (այդ թվում նաև այլ կազմակերպությունների հետ համատեղ) անցկացված միջոցառումներին ընդհանուր թվով մասնակցել են 304 մարդ:


Հաշվետու ժամանակահատվածում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող և կազմակերպական մի շարք հարցերով կենտրոնում և կենտրոնից դուրս տեղի են ունեցել 5 աշխատանքային հանդիպումներ:

Նշված ժամանակահատվածում կենտրոն է այցելել և կենտրոնի ծառայություններից օգտվել է 136 մարդ:

**Արարատի Օրհուս կենտրոնի ծառայություններն ու գործիքները**

Ծառայությունները	Ընդհանուր
Ֆիլմադարան	40
գրադարան	26
Ինտերնետ	22
Պատճենահանող սարք	40
Տեսաձրիչ /սկաներ/	25
Հմակարգիչներ	33
Ընդհանուր	187

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացվում է վերոնշյալ ծառայությունների տեսակները, որոնցից օգտվել են կենտրոնի այցելուները.



Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները համագործակցել են մի շարք կառույցների հետ. ԵԱՀԿ գրասենյակ, Հայաստանի 14 Օրհուս կենտրոններ, ՌԷԿ-Կովկաս, Արարատի մարզպետարան, քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, ԳԱՄԿ, ուսումնական հաստատություններ, բժշկական կենտրոն, հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոն, մանկապարտեզներ, բնապահպանության մարզային տեսչություն, հրշեջ փրկարարական ջոկատի, մարզի և հանրապետության ՀԿ-ների, երիտասարդական կենտրոնների, կամավորների, բիզնես սեկտորի, հանրության հետ: Կենտրոնի համակարգողները մասնակցել են հանդիպումների, քննարկումների, սեմինարների ու կոնֆերանսների, ձեռք են բերել և փոխանցել գիտելիքներ: Կենտրոնի գործունեությունը լուսաբանվել է 'Երկրագործ', 'Ագրոլուր', 'Արարատ', 'Հետք' և 'Քոլտոն' թերթերում և տեղեկատվական կայքերում: Կենտրոնի իրականացրած բոլոր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրված [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում:

Արարատի Օրհուս կենտրոնի համակարգողներ՝ Հռիփսիմե Մարգսյան

Հասցե: ք. Արարատ, Շահումյան 34

Բջջ.: 093 -06-09-07

E-mail:[ripsime-84@mail.ru](mailto:ripsime-84@mail.ru)

[info\\_ararat@aarhus.am](mailto:info_ararat@aarhus.am)



